ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հուլիսի 16-ից 19-ը

ք.Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/ գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Նաիրա Կարապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2017 թվականի հուլիսի 16-ից 19-ը, Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակ

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների չորրորդ փուլին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների չորրորդ փուլի ընթացքում քննարկվել են վերոհիշյալ Համաձայնագրի նախագծի առանձին բաժիններ, մասնավորապես՝ ընդհանուր իրավական դրույթներ, մաքսային ընթացակարգեր և առևտրի դյուրացում, ներքին շուկայի պաշտպանություն, տեխնիկական կանոնակարգեր, սանիտարական, անասնաբուժական և ֆիտոսանիտարական միջոցներ, մրցակցություն, մտավոր սեփականության իրավունք, ճյուղային համագործակցություն և էլեկտրոնային առևտուր:

Համաձայնագրի նախագծի նախնական տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցված էր Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, ինչպես նաև Չինաստանի ժողովրդական Հանրապետության առանձին ոլորտների մասով փորձագետներ:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են չինական կողմի հիմնական տարաձայնությունները՝ Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ և արդյունքում որոշ հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Բանակցությունների արդյունքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ նշված Համաձայնագրի շուրջ կայանալիք հերթական հինգերորդ փուլը կանցկացվի 2017 թվականի սեպտեմբեր ամսին ք.Հանչժոում /Չինաստանի ժողովրդական Հանրապետություն/:

Կողմերի միջև ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների չորրորդ փուլի արդյունքներով կազմված Արձանագրություն:

9. Գործուղվող՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի
Եվրասիական տնտեսական միության և
արտաքին առևտրի վարչության պետ
Նաիրա Կարապետյան

10. Ստորագրություն, ամսաթիվ

27.07.2017 թ.